



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

24 փետրվարի 2022 թվականի թիվ 26-Ա

ք. Երևան

«ԱՄԵՐԻԱ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐԸ ՈՐՈՇ ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄԱՍՈՎ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 54-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով «ԱՄԵՐԻԱ» ՍՊ ընկերության 2022 թվականի փետրվարի 4-ի և փետրվարի 9-ի տեսալսողական ծրագրերի վերաբերյալ ծանուցումները՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշում է.**

1. Հաստատել «ԱՄԵՐԻԱ» ՍՊ ընկերության տեսալսողական ծրագրերի վերաբերյալ ծանուցումները Հավելված 1-ում նշված տեսալսողական ծրագրերի մասով:

2. Մերժել «ԱՄԵՐԻԱ» ՍՊ ընկերության 2022 թվականի փետրվարի 9-ի ծանուցումը Հավելված 2-ում նշված տեսալսողական ծրագրերի մասով՝ հիմք ընդունելով, որ «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 54-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն «ԱՄԵՐԻԱ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված փաստաթղթով չի հիմնավորվել տվյալ տեսալսողական ծրագրերի առանց գովազդի տարբերակը ձեռք բերելու անհնարինությունը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ԱՄԵՐԻԱ» ՍՊ ընկերությանը պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Տ. ՀԱԿՈԲՅԱՆ

2022թ. փետրվարի 24

ք. Երևան

Տեսալսողական ծրագրի անվանումը	Ժամկետը
«Космический» (логотип «Первый Космический») «Спортивный» «Капитан Фантастика»	պայմանագրի գործողության ժամկետով
«Любимое Кино» «Загородная Жизнь» «Тайны Галактики»	

Տեսալսողական ծրագրի անվանումը
«Детский Мир» «Шансон ТВ»